Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2024թ.
փետրվարի 21-ի N1-02/24/1 որոշմամբ
Փոփոխությունները կատարվել են գիտական խորհրդի
2025թ. դեկտեմբերի [illegible] N1-02/25/1 որոշմամբ:

ԿԱՐԳ

ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (այսուհետ՝ ՇՏՀ) միջին մասնագիտական կրթության (այսուհետ՝ ՄՄԿԾ) ուսանողների ուսումնառության ընդհանուր պայմանները:

2. ՇՏՀ ՄՄԿԾ ուսումնառության կարգը մշակված է հիմք ընդունելով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կանոնակարգում է սովորողների տարեկան առաջադիմության հաշվարկի մեթոդիկայի և ուսանողական նպաստ տալու մրցույթի պայմանների մշակումը, մրցույթի կազմակերպման ու իրականացման ընթացակարգը:

II. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

1. ՇՏՀ ՄՄԿԾ համակարգում ուսուցման արդյունքների գնահատումն իրականացվում է ուսանողների պատրաստվածության (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) աստիճանի ստուգման և ուսումնառության ընթացքում՝ առարկայական ծրագրերում սահմանված չափորոշիչային պահանջներին, իսկ ուսումնառության ավարտին՝ պետական կրթական չափորոշիչով կրթության տվալ մակարդակի որակավորմանը ներկայացվող պահանջներին համապատասխանության որոշմամբ:

2. Ուսուցման արդյունքների ստուգման և գնահատման համար ուսանողներին տրվում են առաջադրանքներ, որոնց միջոցով բացահայտվում են ուսանողների յուրացրած գիտելիքի և հմտությունների ամբողջականությունը, ուսանողի ինքնուրույնության աստիճանը և գիտելիքը ներկայացնելու, շարադրելու մակարդակը:

3. Ուսանողների գիտելիքների ստուգումն անց է կացվում միջանկյալ ատեստավորման հետևյալ ձևերով՝ տարբերակված ստուգարք, չտարբերակված ստուգարք, կիսամյակային քննություն և պետական որակավորման քննություն, որոնց ձևերը և քանակը սահմանվում է հաստատված ուսումնական պլանի հիման վրա:

4. Ուսանողները պարտավոր են բոլոր ստուգարքները և քննությունները հանձնել հաստատված ուսումնական պլաններին և ժամանակացույցերին համապատասխան, որոնք սահմանվում և համակարգվում են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

5. Բոլոր քննությունների, ստուգարքների հարցաշարերը տրամադրվում են ուսանողին կիսամյակի սկզբում:

6. Կիսամյակային քննությունների ժամանակաշրջանը սահմանվում է ուսումնական պլանով հաստատված եռշաբաթյա ժամկետում:

7. Հարգելի/անհարգելի պատճառով քննություններին (ստուգարքներին) չներկայացած, անբավարար գնահատված ուսանողներին իրավունք է տրվում այն վերահանձնել ակադեմիական պարտքերի համար սահմանված ժամանակահատվածում, ընդ որում՝

1) անհարգելի պատճառով ուսումնական և արտադրական պրակտիկաներին և ամփոփիչ ատեստավորման չմասնակցած ուսանողներին վերահանձնում չի թուլատրվում,

2) կիսամյակի ընթացքում ուսանողը անբավարար գնահատական կարող է ստանալ ոչ ավել քան 3 առարկայից,

3) յուրաքանչյուր առարկայից անբավարար գնահատականի վերահանձման համար ուսանողին տրվում է երկու հնարավորություն,

4) հարգելի պատճառով քննությանը կամ ստուգարքին չներկայացած ուսանողների համար ակադեմիական պարտքերի թույլատրելի քանակ չի սահմանվում,

5) հարգելի չներկայացած ուսանողների քննությունները կազմակերպվում են առաջին քննաշրջանի ավարտին՝ առաջին լուծարքին նախորդող շաբաթվա ընթացքում,

6) կիսամյակի ուսումնական ծրագրերը չկատարած՝ քննաշրջանում երեք տարբեր առարկաներից, կամ նույն առարկայից երեք անգամ «անբավարար» գնահատական ստացած, սահմանված ժամկետներում առարկայական պարտքերը չմարած ուսանողները Ուսումնամեթոդական բաժնի պետի ներկայացմամբ, ռեկտորի հրամանով հեռացվում են ուսանողության շարքերից**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

8. Քննությունների, տարբերակված և չտարբերակված ստուգարքների և դրանց վերահանձնումների արդյունքները գրանցվում են միասնական նմուշի տեղեկագրերում և հանձնվում Ուսումնամեթոդական բաժին**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

9. Ուսումնական պլանով սահմանված կուրսային աշխատանքների պաշտպանությունը և արտադրական պրակտիկաների հաշվետվությունների ներկայացումը ուսանողները պարտավոր են հանձնել սահմանված ժամանակատվածում:

10. Նախաավարտական, արտադրական և ուսումնական պրակտիկաների պաշտպանության արդյունքները գրանցվում են միասնական նմուշի տեղեկագրերում և հանձնվում

Ուսումնամեթոդական բաժին **(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ):**

11. Քննությունների, տարբերակված և չտարբերակված ստուգարքների տեղեկագրերը տպվում են մեկ օրինակից, համարակալվում և կնքվում են ՇՏՀ ուսումնամեթոդական բաժնի կողմից՝ քննաշրջանը սկսելուց առնվազն 5 օր առաջ:

12. Տեսական կամ առանց տեսական ուսուցման պրակտիկա ենթադրող մոդուլների գնահատականները ուսանողին տրվող դիպլոմի ներդիրում ամփոփվում են «տեսական ուսուցման և պրակտիկայի» մեկ միասնական գնահատականով, որը հաշվարկվում է բոլոր մոդուլներից ուսանողի ստացած գնահատականների միջին թվաբանականով՝ կլորացման սկզբունքով և արտացոլվում է 10 բալանոց սանդղակով:

13. Առարկայական քննությունները ընդունում են դասավանդող դասախոսները (առնվազն 2 անդամից կազմված հանձնաժողովով),

14. Առարկայական քննությունների վերահանձնումները ընդունում են դասավանդող դասախոսները (առնվազն 2 անդամից կազմված հանձնաժողովով):

15. Հատուկ դեպքերում, ռեկտորի թույլտվությամբ, թույլատրվում է ուսանողների պարտքերի մարման երրորդ վերահանձնում՝ ռեկտորի հրամանով կազմված հանձնաժողովով:

16. Առարկայական քննությունների անցկացման, գնահատման և սահմանված տեղեկագրերում դրանց արդյունքների լրացման պատասխանատվությունը կրում է քննող դասախոսը, որի համար վերջինս իր ստորագրությամբ վավերացնում է տեղեկագրերում արտացոլված արդյունքները:

17. Ստուգարքով ավարտվող առարկաներից ստուգարքը ընդունում է տվյալ առարկան դասավանդող դասախոսը, իսկ վերջինիս բացակայության դեպքում, նույն առարկան դասավանդող այլ դասախոս՝ ամբիոնի վարիչի մասնակցությամբ:

18. Քննաշրջանում ուսումնական պլանում ներառված առարկաներից կամ առարկայական մոդուլներից, պրակտիկաներից և կուրսային աշխատանքներից ուսանողների գիտելիքը քննության կամ տարբերակված ստուգարքի դեպքում գնահատվում են 10 բալանոց սանդղակով, ամբողջ թվերով՝ «10-տաս», «9-ինն», «8-ութ», «7-յոթ», «6-վեց», «5-հինգ», «4-չորս», «3-երեք», «2-երկու», «1-մեկ» միավորներով:

Ընդ որում՝

1) «1-մեկ», «2-երկու» և «3-երեք» միավորները համարժեք են «անբավարար» գնահատականի,

2) «4-չորս», «5- հինգ» և «6- վեց» միավորները համարժեք են «բավարար» գնահատականի,

3) «7-յոթ» և «8-ութ» միավորները համարժեք են «լավ» գնահատականի,

4) «9-ինն» և «10-տաս» միավորները համարժեք են «գերազանց» գնահատականի:

19. Կիսամյակի ընթացքում, ուսումնական գործընթացին զուգահեռ, փուլերով կատարվում է գիտելիքի ստուգման և գնահատականի ձևավորման գործընթաց՝ համաձայն մոդուլի արդյունքների գնահատման ժամանակացույցի **(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ):**

20.Մոդուլի արդյունքի չհանձնման դեպքում թույլատրվում է ուսանողին այն վերահանձնելու մինչև հաջորդ արդյունքի հանձնման օրը:

21. Մինչև քննաշրջանը մոդուլի արդյունքը/ները/ չհանձնելու դեպքում ուսանողին թույլատրվում է այն վերահանձնել առարկայական պարտքերի մարման շրջանում՝ ըստ չհանձնված արդյունքների հարցաշարերի:

22. ՇՏՀ ՄՄԿԾ-ում սահմանված են ուսումնառողների ձեռքբերած կարողունակությունների մակարդակը չափող հիմնական գնահատման մեթոդները.

ա) բանավոր հարցում, սեմինար,

բ) գրավոր առաջադրանք,

գ) անհատական, հետազոտական, վերլուծական, նախագծային աշխատանք,

դ) խնդիրների, իրավիճակային խնդիրների լուծում,

ե) քննարկում/բանավեճ,

զ) խմբային աշխատանք/ համագործակցային աշխատանք և այլն:

23. Բացի սույն կարգի 22-րդ կետում նշված գնահատման մեթոդներից կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ՝ ըստ դասընթացի կրթական վերջնարդյունքների: Այս պարագայում դասախոսը ամբիոնի հետ համաձայնեցված մշակում է գնահատման մեթոդին համապատասխան գնահատման ռուբրիկը և ներառում համապատասխան դասընթացի ծրագրում:

24. Միջանկյալ, ամփոփիչ ստուգումների առաջադրանքների գնահատման ժամանակ գնահատման ռուբրիկը կարող է փոփոխվել դասընթացի առանձնահատկություններից ելնելով՝ նախապես համաձայնեցվելով ամբիոնի հետ:

25. Գնահատման մեթոդներն ու դրանց համապատասխան ռուբրիկները ներկայացված են Հավելված 1-6-ում **(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ):**

26. Քննաշրջանում ուսումնական պլանում ներառված առարկաներից կամ առարկայական մոդուլներից ուսանողների գիտելիքը չտարբերակված ստուգարքի դեպքում գնահատվում է «ստուգված»/«չստուգված» գնահատականներով:

27. Պետական որակավորման քննության գնահատականը նշանակվում է 10 միավորային սանդղակով՝ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»:

28. Տվյալ կուրսի ուսումնական պլանով նախատեսված տեսական և գործնական առաջադրանքները և ուսումնական արտադրական պրակտիկաները, բոլոր քննությունները և

ստուգարքները, ակադեմիական պարտքերը հաջող հանձնած ուսանողները ռեկտորի հրամանով փոխադրվում են հաջորդ կուրս, իսկ ավարտական կուրսերի ուսանողները ռեկտորի հրամանով թույլատրվում են մասնակցելու պետական որակավորման քննության:

29. Ավարտական կուրսի ուսանողի պետական ամփոփիչ քննությունների հանձնումը իրականացվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2006թ. հուլիսի 21-ի թիվ 638-Ն հրամանով հաստատված «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման մասին» կարգի:

II. ՄՄԿԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՌԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԱՏՈՒՄԸ

1. ՄՄԿԾ ուսանողը հեռացվում է.

ա). կիսամյակի արդյունքներով ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով,

բ). ՇՏՀ ՄՄԿԾ-ի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով նախատեսված պարտականությունների խախտման դեպքերում,

գ). ՄՄԿԾ-ի կողմից սահմանված ժամկետում ուսման վարձը չվճարելու դեպքում:

դ). Անհարգելի բացակայությունների սահմանաչափերը գերազանցելու դեպքում՝

- 30 ժամ անհարգելի բացակայություն — զգուշացում,
- 60 ժամ անհարգելի բացակայություն — նկատողություն,
- 120 ժամ անհարգելի բացակայություն — խիստ նկատողություն,
- 120 ժամից ավելի անհարգելի բացակայություն — ՄՄԿԾ-ի ուսանողության համակազմից հեռացում **(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ):**

2. ՄՄԿԾ ուսանողը ազատվում է.

ա) իր դիմումի համաձայն,

բ) այլ ուսումնական հաստատություն տեղափոխվելու դեպքում:

4. ՇՏՀ ՄՄԿԾ-ի ուսանողի ազատման հրաման իր դիմումի համաձայն չի կարող տրվել, եթե նա ենթակա է հեռացման համաձայն սույն Կարգի 1-ին գլխի 7-րդ կետով նախատեսված դեպքերի:

5. Ուսանողի ուսումնառությունն ընդհատվում է.

ա) ժամկետային զինծառայության զորակոչվելու դեպքում,

բ) առողջական վիճակի պատճառով ակադեմիական և ժամանակավոր անաշխատունակության արձակուրդում գտնվելու դեպքում **Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ),**

գ) հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում:

6. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև հաջորդ կիսամյակի երկրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

7. Սույն կարգի 2-րդ գլխի 7-րդ կետի առաջին ենթակետով նախատեսված դեպքում, ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացման հրամանները տրվում են քննաշրջանի, ակադեմիական պարտքերի մարման արդյունքների ամփոփումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, որի մասին ուսանողը նախապես տեղեկացվում է:

8. ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացված (ազատված) արական սեռի ուսանողների վերաբերյալ հրամանները 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են համապատասխան զինկոմիսարիատներ:

9. ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացման (ազատման) դեպքում ուսանողի դիմումի համաձայն, 3 աշխատանքային օրվա ընթացքում նրան տրվում է հեռացման (ազատման) հրամանի պատճենը, ակադեմիական տեղեկանքը և ավարտական վկայականը: ՇՏՀ-ի կողմից հաստատված ավարտական վկայականի պատճենը պահվում է ուսանողի գործում:

III. ՄՄԿ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1. Ուսանողական իրավունքների վերականգնումը թույլատրվում է սկսած առաջին կուրսի երկրորդ կիսամյակից:

2. Ուսանողական իրավունքների վերականգնման դիմումները ներկայացվում են կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում: Վերականգնման դիմումին կցվում է ակադեմիական տեղեկանքը կամ ստուգման գրքույկի պատճենը:

3. Այլ քոլեջներից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են ՇՏՀ-ի ռեկտորի հրամանով:

4. ՇՏՀ-ն քննարկում է ուսանողի վերականգնման դիմումը և որոշում նրա ուսումնառության շարունակման կուրսը և մյուս պայմանները, կամ հիմնավորում է մերժելու մասին իր որոշումը:

5. Առաջացած առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի մարման համար ՇՏՀ ռեկտորի կողմից սահմանվում է ժամկետ, սակայն ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը: Առարկայական տարբերություն է համարվում ուսումնառած պլանում բացակայող առարկան կամ որևէ առարկայից 75 տոկոսից պակաս ուսումնառած առարկաները:

Վերականգնվող ուսանողները ակադեմիական պարտքերը, առարկայական տարբերությունները հանձնում են վճարովի հիմունքներով՝ յուրաքանչյուր առարկայի հանձնման կազմակերպման համար սահմանված 5000 (հինգ հազար) դրամի չափով (ըստ փաստացի ծախսերի):

6. Առարկայական տարբերությունների և ակադեմիական պարտքերի հանձնումից հետո կցագրման հրամանը փոխարինվում է ուսանողի հրամանագրումով:

7. Զորակոչվելու կապակցությամբ և առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդի ձևակերպմամբ ուսումնառությունը ընդհատած ուսանողները ուսումնառությունը շարունակում են այն պահից, որից այն ընդհատել են՝ անկախ առաջացած ծրագրային տարբերություններից:

8. Վճարովի ուսուցման համակարգում ուսանողների հրամանագրումը կատարվում է կիսամյակի ուսման վարձը վճարելուց հետո՝ հիմք ընդունելով կնքվող պայմանագրի դրույթները**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

9. ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են այն կիսամյակում, որից նրանք հեռացվել (ազատվել) են, եթե վերականգնման պահին առարկայական անհամապատասխանություններով պայմանավորված առարկաների քանակը չի գերազանցում 8-ը: Ութ առարկան գերազանցելու դեպքում ուսանողին առաջարկվում է վերականգնվել ավելի ցածր կիսամյակում, որի համար առարկայական անհամապատասխանությունների սույն կետում նշված պահանջը բավարարվում է, բացառությամբ առաջին կուրսի առաջին կիսամյակի:

10. ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացված (ազատված) ուսանողները վերականգնվում են տվյալ մասնագիտության համար լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի սահմաններում:

11. Սույն Կարգի 3-րդ գլխի 13-րդ կետով ուսումնառությունն ընդհատած ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքներն այն պահից, երբ ընդհատել են այն, անկախ լիազոր մարմնի կողմից սահմանված տեղերի քանակից և առաջացած ծրագրային տարբերություններից:

12. ՇՏՀ ՄՄԿԾ-ից հեռացված ուսանողները վերականգնում են իրենց ուսանողական իրավունքները առնվազն մեկ կիսամյակ հետո:

13. Տեսական կուրսը ամբողջությամբ ավարտած, բայց պետական քննությունները (քննություն) չհանձնած ուսանողին իրավունք է վերապահվում ՀՀ նախնական մասնագիտական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին օրենքի համաձայն, ռեկտորի թույլատվությամբ, հանձնելու պետական քննությունները (քննությունը) ներքոհիշյալ ենթակետում սահմանված վճարումները կատարելուց հետո**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

Տեսական կուրսն ավարտած, բայց պետական քննությունը չհանձնած ուսանողի համար սահմանվում է 7500 ՀՀ դրամ վճար:

15. Վերականգնված ուսանողի անձնական գործում պահվում են ուսանողի դիմումը, ակադեմիական տեղեկանքը, վերականգնման մասին հրամանի պատճենը, ՇՏՀ-ի հետ կնքած պայմանագիրը և միջնակարգ կրթության կամ միջին մասնագիտական կրթության ավարտական

վկայականը:

16. Ակադեմիական տեղեկանքների տրամադրման համար վճարի սահմանաչափը կազմում է 5000 դրամ **(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

Iv. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Ուսանողների առաջադիմությունը գնահատվում է 10 միավորանոց համակարգով, իսկ կիսամյակի միջին միավորը որոշվում է տվյալ կիսամյակի քննությունների, դիֆերենցված ստուգարքների և գնահատականով ավարտվող փորձուսուցումների միջին թվաբանականով՝ 0,01-ի ճշտությամբ (կլորացման մեթոդով):

2. Ուսանողների առաջադիմության միջին գնահատականը որոշվում է առարկայական պարտքերի վերջնական մարումից հետո, բայց ոչ ուշ քան մինչև սեպտեմբերի 15-ը (միջին միավորի որոշման ժամանակ հաշվի է առնվում առարկայական պարտքերի մարման դրական գնահատականը):

Առաջադիմության արդյունքների հաշվարկման ժամանակ հավասար միջին միավորների դեպքում առաջնությունը տրվում է.

- քննաշրջանի ընթացքում բոլոր քննությունները դրական հանձնած ուսանողներին (բացառությամբ այն ուսանողների, ովքեր քննաշրջանում քննության(ներին) չեն ներկայացել հարգելի պատճառով փաստաթղթերի առկայության դեպքում),
- անհարգելի բացակայություններ չունեցող ուսանողներին,
- ՄՄԿԾ-ի ուսանողական խորհրդի անդամներին,
- մասնագիտական, ընդհանուր մասնագիտական կամ տվյալ մասնագիտության համար առավել կարևոր առարկաներից առավել բարձր միավոր ստացած ուսանողներին,
- ուսանողական գիտական ընկերություններում ուսումնահետազոտական աշխատանքներ կատարած և հրատարակած աշխատանք(ներ) ունեցող ուսանողներին,
- միջքոլեջական, հանրապետական կամ միջազգային առարկայական օլիմպիադաների մրցանակիրներին**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:
- պատշաճ վարքագիծ ունեցող ուսանողներին,
- զինվորական ծառայությունն ավարտած ուսանողներին,
- սոցիալապես ծանր վիճակում գտնվող ուսանողներին (ամրագրված համապատասխան փաստաթղթերով):

3. ՇՏՀ-ի ֆինանսական միջոցների հաշվին վարձավճարի մասնակի զեղչի (նպաստների տեսքով) տրման հարցը քննարկվում է ուսումնական տարվա ընթացքում 2 անգամ՝ կիսամյակի առաջադիմության արդյունքներով, ուսանողների դիմումների հիման վրա: Քննարկումները կատարվում են մանկավարժական խորհրդում, իսկ դրա բացակայության դեպքում ՇՏՀ Գիտական

խորհրդում, արդյունքները հաստատվում են ռեկտորի հրամանով**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

4. Որպես կանոն, ուսանողի վարձավճարի զեղչի հայցման դիմումները ընդունվում են յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ից մինչև փետրվարի 15-ը և օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը: Մասնակի զեղչը տրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության արդյունքներով և այդ մասին հրամանի գործողությունը տարածվում է միայն առաջիկա ընթացիկ կիսամյակի վրա**(Փոփ. կատ. են 08.12.2025թ. N1-08/25/1 որոշմամբ)**:

Գիտական խորհրդի նախագա Ն.Ա. Միքայելյան

Գիտական քարտուղար ժ/պ՝ Լ.Գ.Այդինյան

Հավելված 1. Բանավոր հարցման, սեմինարի գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ	Միավորներ			
	Անբավարար/ 0-3	Բավարար/ 4-6	Լավ 7-8	Գերազանց / 9-10
Նյութի տրամաբանական ներկայացում (65%)	Չի կարողանում ներկայացնել տեսական նյութը	Ներկայացնում է պարզունակ մտքեր և հիմնական սահմանումներ	Ներկայացնում է տրամանաբական հերթականությամբ ամփոփ ավարտուն մտքեր	Նյութը ներկայացնում է համակարգված և հիմնավորում է օրինակներով/
Հետադարձ կապ(20%)	Չի կարողանում պատասխանել թեմայի վերաբերյալ հարցերին/	Տալիս է պարզունակ պատասխաններ և չի կարողանում մեկնաբանել և հիմնավորել պատասխանները/	Տալիս է տեսական պատասխաններ, որոնք մասամբ է կարողանում գործնականում հիմնավորել	Տալիս է հստակ և հիմնավոր պատասխաններ
Բանավոր ներկայացման հմտություններ/ (15%)	Հաղորդակցման վատ հմտություններ և ժամանակի վատ կառավարում/	Հաղորդակցման բավարար հմտություն, ժամանակի չափավոր օգտագործում/	Հաղորդակցման լավ հմտություններ, ժամանակի արդյունավետ կառավարում/	Կարողանում է լիարժեք և համամասնորեն կառավարել հատկացված ժամանակը/

Հավելված 2. Գրավոր առաջադրանքի գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ	Միավորներ			
	Անբավարար 0-3	Բավարար 4-6	Լավ 7-8	Գերազանց 9-10
Նյութի հստակ և կապակցված շարադրումը/ (25%)	Չի կարողանում գաղափարները գրավոր կերպով փոխանցել/	Որոշակի հստակությամբ գրավոր կերպով փոխանցում է մտքերը/	Գաղափարները հստակ և արդյունավետ գրավոր կերպով հաղորդում է/	Գաղափարները ներկայացնում է բացառիկ մասնագիտական բառապաշարի շարադրանքով/
Ներկայացված նյութի հիմնավորվածության/ (50%)	Ներկայացված չէ որևէ հիմնավոր նյութը/	Ներկայացված են պարզունակ մտքեր և հիմնական սահմանումներ/	Ներկայացված են տրամանաբական հերթականությամբ ամփոփ ավարտուն մտքեր/	Ներկայացված են համակարգված տեղեկություններ, որոնք հիմնավորված են օրինակներով/
Քերականական և ուղղագրական սխալների առկայություն (10%)	Հաճախ թույլ է տալիս քերականական և ուղղագրական սխալներ/	Երբեմն թույլ է տալիս քերականական և ուղղագրական սխալներ/	Ունի քերականական և ուղղագրական քիչ սխալներ/	Քերականական և Ուղղագրական սխալներ գրեթե առկա չեն/
Կառուցվածք և տրամաբանություն/ (15%)	Գրավոր փաստաթղթերում չկա կառուցվածք կամ տրամաբանություն/	Գրավոր փաստաթղերը հիմնականում ունեն կազմակերպված կառուցվածք/	Փաստաթուղն ունի լավ կազմակերպված և տրամաբանական կառուցվածք/	Փաստաթուղթն ունի հստակ պլանավորում, տրամաբանական կառուցվածք և սահունություն

Հավելված 3. Անհատական, հետազոտական, վերլուծական, նախագծային աշխատանքի գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ/	Միավորներ/Scores			
	Անբավարար/ 0-3	Բավարար/ 4-6	Լավ 7-8	Գերազանց / 9-10
Տեղեկատվության վերլուծություն/	Չի կարողանում վերլուծել տեղեկատվություն	Որոշակի ճշգրտությամբ վերլուծում է	Ճշգրիտ և արդյունավետ վերլուծում է	Վերլուծում է տեղեկատվությունը բացառիկ

(20%)	ը /	տեղեկատվությունը/	տեղեկատվությունը/	ճշգրտությամբ և խորությամբ/
Տվյալների և փաստերի մեկնաբանություն (20%)/	Սխալ է մեկնաբանում տվյալները և փաստերը/	Երբեմն սխալ է մեկնաբանում տվյալներն ու փաստերը/	Հազվադեպ է սխալ մեկնաբանում տվյալներն ու փաստերը/	Հազվադեպ կամ երբեք սխալ չի մեկնաբանում տվյալներն ու փաստերը/
Արժեքավոր եզրակացությունները/ (25%)	Տալիս է ոչ վերաբերելի կամ սխալ եզրակացություններ /|	Տալիս է մասամբ վերաբերելի եզրակացություններ/	Տալիս է վերաբերելի և լավ հիմնավորված եզրակացություններ	Տալիս է խիստ վերաբերելի և ամբողջությամբ հիմնավորված եզրակացություններ
Քննադատողական մտածողության առկայություն/ (10%)	Հուրկ է քննադատական մտածողության հմտությունից/	Ցուցաբերում է քննադատական մտածողության հիմնական հմտություններ/	Ցուցաբերում է քննադատական մտածողության ուժեղ հմտություններ/	Ցուցաբերում է բացառիկ քննադատական մտածողության հմտություններ/
Ներկայացվող նյութի բովանդակությունը/ (25%)	Աշխատանք առկա չէ, թիմը առաջադրանքի նպատակը չի իրականացրել	Ներկայացված նյութը սահմանափակ է, ուսանողներին չի հաջողվել իրականացնել առաջադրանքի համակողմանի ուսումնասիրություն և նպաստել նպատալի լիարժեք իրականացմանը/	Ներկայացվող նյութում առկա է հստակ համառոտագրություն, ներկայացվել են կարևոր ասպեկտները, առաջադրանքի նպատակը հիմնականում իրականացված է/	Ուսանողներին հաջողվել է իրականացնել ճիշտ համառոտագրություն և համեմատական վերլուծություն, առաջադրանքի նպատակը լիովին իրականացված է/

Հավելված 4. Խնդիրների, իրավիճակային խնդիրների լուծման գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ/	Միավորներ			
	Անբավարար/ 0-3	Բավարար/ 4-6	Լավ 7-8	Գերազանց/ 9-10
Խնդրի առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքներ/ (15%)	Չի տիրապետում խնդրի առարկայի վերաբերյալ տեսական գիտելիքների/	Տիրապետում է խնդրի առարկայի վերաբերյալ պարզունակ գիտելիքների/	Տիրապետում է խնդրի առարկայի վերաբերյալ տրված տեսական նյութին և կարողանում է մեկնաբանել պատճառահետև անք ային կապերը/	Տիրապետում է խնդրի բոլոր ասպեկտների վերաբերյալ ամբողջական տեսական մոտեցումներին, կարողանում է գործնականում կիրառել խնդրի լուծման նպատակով/
Տրամաբանական մոտեցում/ (15%)	Չի կարողանում տրամաբանել/	Տրամաբանական եզրահանգումներ հիմնված են միայն տեսական գիտելիքների վրա/	Կարողանում է կատարել տեսական և գործնական տրամաբանական եզրահանգումներ/	Տիրապետում է խնդրի ողջ տրամանաբանական կառուցվածքին/

Խնդրի վերլուծություն համադրում/ (30%)	Չի կարողանում դասակարգել խնդրի բաղադրիչները, վերլուծել և համադրել/	Կարողանում է դասակարգել խնդրի բաղադրիչները, կատարում է պարզունակ վերլուծություն սակայն չի կարողանում համադրել ստացված արդյունքները/	Կարողանում է դասակարգել խնդրի բաղադրիչները և վերլուծել դրանք, սակայն ոչ լիարժեք է համադրում ստացված արդյունքները/	Կարողանում է լիարժեք դասակարգել խնդրի բաղադրիչները, և վերլուծել դրանք և համադրել ստացված արդյունքները/
Խնդրի լուծում/ (30%)	Չի կարողանում առաջադրել խնդիրի լուծման	Կարողանում է առաջարկել խնդրի լուծման հնարավոր	Կարողանում է առաջադրել խնդրի լուծման	Կարողանում է առաջադրել խնդրի լուծման
	տարբերակնե ր/	նվազագույն տարբերակներ, չի կարողանում հիմնավորել ընտրված լուծումը/	այլընտրանքային լուծումներ և ընտրել օպտիմալ լուծում, սակայն ոչ լիարժեք է հիմնավորում ընտրված լուծումը/	այլընտրանքային լուծումներ, ընտրել և հիմնավորել ամենարդյունավետ լուծումը/
Ստեղծարար և նորարարական մոտեցման առկայություն/ (10%)	Լուծումների մեջ բացակայում է ստեղծարարությու ն նու նորարարությունը/	Դրսևորում է ստեղծարարությունն և նորարարություն, ինչը սակայն չի նպաստում խնդրի արդյունավետ լուծմանը/	Դրսևորում է համարժեք ստեղծարարությունն և նորարարություն, ինչը մասամբ է նպաստում խնդրի արդյունավետ լուծմանը/	Դրսևորում է լուծումների բացառիկ ստեղծարարություն և նորարարություն/

Հավելված 5. Քննարկման/բանավեճի գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ/	Միավորներ			
	Անբավարար/ 0-3	Բավարար/ 4-6	Լավ 7-8	Գերազանց / 9-10
Կապակցված մտքեր ներկայացում/ (25%)	Չի կարողանում փոխանցել մտքերը: Հաճախ խոսում է անհասկանալի կամ անհամապա-տասխան/	Որոշ պարզությամբ փոխանցում է մտքերը, սակայն չկա համակարգվա-ծություն և հիմնական գաղափարի առկայություն: Երբեմն խոսում է անհամահունչ:	Հստակ և արդյունավետ կերպով հաղորդում է գաղափարները: Խոսում է համահունչ և համոզիչ/	Հաղորդում է գաղափարներ ը բացառիկ պարզությամբ: Խոսում է հարուստ մասնագիտակա ն բառապաշարով և համոզիչ/
Մասնակցություն բովանդակային քննարկման/բան ավեճի(35%)	Չի մասնակցում բովանդակալից քննարկումների / բանավեճի	Ներգրավվում է քննարկումների/ բանավեճի մեջ, բայց արտահայտում է պարզունակ մտքեր/	Ներգրավվում է բովանդակալից և համապատասխա ն քննարկումների/ բանավեճի մեջ/	Վարում և հարստացնու մ է քննարկումը/ բանավեճը խորությամբ/
Փաստարկնե րի ներկայացում/ (25%)	Չի կարողանում ներկայացնել հակափաստարկ ն եր/փաստարկներ /	Ներկայացում է պարզունակ հակափաստարկնե ր/ փաստարկներ՝ մակերեսային հիմնավորմամբ/	Ներկայացնում է հիմնավոր փաստարկներ/ հակափաստարկնե ր /	Ներկայացնում է հիմնավոր փաստարկներ/ հակափաստարկներ գործնական կիրառությամբ/
Լսելու հմտությունների	Չի ցուցաբերում լսելու	Երբեմն ընդհատում է ուրիշներին, ունի	Դրսևորում է ակտիվ լսելու	Դրսևորում է ակտիվ լսելու բացառիկ հմտություններ/

դրսևորում/ Demonstration of (15%)	ցանկություն/	լսելու բավարար հմտություն/	հմտություններ/	

Հավելված 6. Խմբային աշխատանքի / Համագործակցային աշխատանքի գնահատման ռուբրիկ

Գնահատման չափանիշներ	Միավորներ			
	Անբավարար 0-3	Բավարար 4-6	Լավ 7-8	Գերազանց 9-10
Համապատասխան գրականության ուսումնասիրություն (10%)	Չի ուսումնասիրել որևէ գրականություն/	Ուսումնասիրել է առնվազն 2 հավաստի ինֆորմացիոն աղբյուր/	Ուսումնասիրել է 4 հավաստի ինֆորմացիոն աղբյուր/	Ուսումնասիրել է 4-ից ավել հավաստի ինֆորմացիոն աղբյուր/
Խմբի ուսանողների մասնակցայնություն (20%)	Խումբային աշխատանքը որևէ արդյունք չի ապահովել: Սովորողները չեն կարողանում նպաստել թիմի նպատակների իրականացմանը/	Խումբը ներկայացնում է յուրաքանչյուրին հատկացված դերը, սակայն իրականացված աշխատանքը հստակ չէ, թիմի անդամները չեն նպաստել թիմի նպատակների արդյունավետ իրականացմանը/	Խմբի յուրաքանչյուր անդամ ներկայացնում է իր կատարած աշխատանքը, սակայն գործառույթները բաշխված են ոչ համաչափ: Թիմի անդամները նպաստում են թիմի նպատակների իրականցմանը/	Կատարված է հստակ հավասարաչափ աշխատանքի բաժանում: Թիմի բոլոր անդամները լիովին նպաստել են թիմ նպատակների իրականացմանը/

Տեսասահիկի առկայություն/ (10%)	Աշխատանքը իրականացված չէ/	Տեսասահիկ առկա չէ	Առկա է տեսասահիկ, որը առավելապես տեքստեր է պարունակում և հետաքրքրություն չի առաջացնում ունկնդիրների շրջանում/	Առկա է հետաքրքիր տեսասահիկ, որը ամբողջությամբ արտացոլում է առաջադրանքի բովանդակությունը/
Ներկայացվող նյութի բովանդակությունը/	Աշխատանք առկա չէ, թիմը առաջադրանքի	Ներկայացված նյութը սահմանափակ է, ուսանողներին չի	Ներկայացվող նյութում առկա է հստակ համառո-	Ուսանողներին հաջողվել է իրականացնել ճիշտ

(40%)	նպատակը չի իրականացրել/	հաջողվել իրականացնել առաջադրանքի համակողմանի ուսումնասիրություն և նպաստել նպատալի լիարժեք իրականացմանը/	տագրություն, ներկայացվել են կարևոր ասպեկտները, առաջադրանքի նպատակը հիմնականում իրականացված է/	համառո-տագրություն և համեմատական վերլուծություն, առաջադրանքի նպատակը լիովին իրականացված է/
Թիմային աշխատանքի և համագործակցայի ն հմտություններ/ (20%)	Թիմի անդամները չեն դրսևորում թիմում աշխատելու և համագործակցելու հմտություններ/	Թիմում առկա է որոշակի համագործակցային միջավայր, դրսևորվում է ոիմային աշխատանք, սակայն առկա են բացահայտ դոմինանտ և բացահայտ պասիվ անդամներ/.	Թիմի անդամները արդյունավետորեն համագործակցում են միմյանց հետ և հստակ դրսևորում են թիմային աշխատանքի հմտություններ/	Թիմի անդամները դրսևորում են բացառիկ և անխափան թիմում աշխատելու և համագործակցելու հմտություններ/